ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ԴԱՏԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ՀԱՐԿԱԴԻՐ ԿԱՏԱՐՈՒՄՆ ԱՊԱՀՈՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

ք.Երևան, Հալաբյան 41 ա
/060-57-04-11/

№ Հվ-3546

"...18.." ....11.....2015թ.

Ինֆորմացիայի ազատության կենտրոն

հասարակական կազմակերպության իրավաբան

Գևորգ Հայրապետյանին

/ք.Երևան, Բուզանդի 1/3, 4-րդ հարկ/

Հարգելի պարոն Հայրապետյան,

Ի պատասխան 2015 թ. նոյեմբերի 10-ի 264-ի 8 թվագրությամբ Ձեր հարցմանը՝ տեղեկացնում եմ, որ ՀՀ ԱՆ դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության կողմից 2014 թվականի ընթացքում ՀՀ պետական բյուջեի օգտին բռնագանձվել է 21.754.520.067 ՀՀ դրամ, ֆիզիկական անձանց օգտին՝ 1.614.761.980 ՀՀ դրամ, իրավաբանական անձանց օգտին՝ 8.938.935.561 ՀՀ դրամ: 2015 թվականի 9 ամիսների ընթացքում ՀՀ պետական բյուջեի օգտին բռնագանձվել է 5.456.850.710 ՀՀ դրամ, ֆիզիկական անձանց օգտին՝ 1.152.376.180 ՀՀ դրամ, իրավաբանական անձանց օգտին՝ 9.302.226.087 ՀՀ դրամ:

2014 թվականի ընթացքում գումարը բռնագանձելու անհնարինության հիմքով ավարտվել են թվով 133.612 կատարողական վարույթ, որոնցով մնացորդ բռնագանձման ենթակա գումարը կազմում է՝ 11.163.051.091 ՀՀ դրամ: 2015 թվականի 9 ամիսների ընթացքում գումարը բռնագանձելու անհնարինության հիմքով ավարտվել են թվով 172.050 կատարողական վարույթ, որոնցով մնացորդ բռնագանձման ենթակա գումարը կազմում է՝ 11.077.195.175 ՀՀ դրամ:

2014 և 2015 թվականներին ՀՀ կառավարությունը պատական բյուջեով ՀՀ ԱՆ դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության հատկացրել է համապատասխանաբար՝ 906 մլն.233 հազար 600 դրամ և 1 մլրդ 232 մլն. 733 դրամ:

Մամուլի քարտուղար **Ռիմա Եգանյան**